

ԱՐԴԻ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՆՈՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ

Հայ բառարանագրության մի առանձին բնագավառ է թարգմանական բառարանների ստեղծումը: Մեզանում 17-րդ դ. ի վեր երևան են եկել երկլեզվյան և բազմալեզվյան այնպիսի բառարաններ, որոնց մի կողմում հայերենն է եղել, իսկ մյուս կողմում՝ որևէ օտար լեզու կամ լեզուներ:

Հայ-ֆրանսիական բառարանագրությունը սկիզբ է առնում 19-րդ դ. 10-ական թթ., երբ լույս են տեսնում Մխիթարյան միաբանության անդամ, լորդ Ջ. Գ. Բայրոնի հայերենի ուսուցիչ Հար. Ավգերյանի բավականին ծավալուն աշխատանքները՝ «Բառարան համառոտ ի գաղղիական է ի հայ» (հ. 1, Վենետիկ, 1812), «Բառարան համառոտ ի հայ է ի գաղղիական» (հ. 2, Վենետիկ, 1817) և «Բառագիրք գաղղիերենն է ի հայ և ի տաճիկ» (Վենետիկ, 1840):

Մինչև 1960-ական թթ. կեսերը մեզանում լույս է տեսել երկու տասնյակից ավելի նմանատիպ բառարան, որոնց մոտ կեսն ունեցել է մեկից ավելի իրատարակություն: Դրանք հիմնականում սովորական ծավալի, հաճախ երկու տասնյակ հազարից ավելի բառահոդովածներ ընդգրկող բառարաններ են: Առավել ծավալուն, միաժամանակ առավել ուշագրավ են Ս. Գանթարյանի, Ս. Էմինյանի, Մ. Հովհաննիսյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Ե. Տեր-Ղազարյանի, Մ. Քաջունու բառարանները: Հայ-ֆրանսիական բառարանագրության մեծահամբավ գլուխգործոցը թերևս եղել է և մնում է Ն. Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերեն լեզուն է ի հայերեն» (Կ. Պոլիս, 1884, 1304 էջ) գիրքը:

Բնական է կարծել, որ այդ բնույթի բառարանների բառագիտական ուսումնասիրությունը մեծ նպաստ կարող է բերել թե մեկ և թե մյուս լեզվի բառապաշարի պատմությանը վերաբերող շատ հարցերի պարզաբանման գործին:

Ինչպես վերը նշված, այնպես էլ ավելի ուշ երևան եկած տարբեր ծավալի և կոնկրետ նպատակների ծառայող բառարանների շարքը բոլորովին վերջերս համալրվել է մի նոր աշխատանքով: Լույս է տեսել Ա. Կ. Բարլեզիզյանի «Հայերեն-ֆրանսերեն բառարանը» (Երևան, 2009, 970 էջ), որը պարունակում է 40 հազար բառահոդված և 30 հազար դարձվածային միավոր և արտահայտություն: Վերջին ժամանակներս մեզանում հիշյալ երկու լեզուների բառամթերքի նման ընդգրկմամբ բառարան չի եղել, և այս բառարանը լրացնում է այդ բացը:

Բառարանի ակնառու կողմերից մեկը հայերեն բառապաշարի թարմությունն է: Հիմնական, ավանդաբար փոխանցվող բառերի կողքին մեծ տեղ է տրված նորակազմ բառերին ու արտահայտություններին: Հեղինակն ուշադրություն է դարձրել բառապաշարի հատկապես այն նոր բառերին, որոնք ստեղծվել են վերջին երկու-երեք տասնամյակում և այսօր ունեն համեմատաբար լայն գործածություն: Այդ նորաբանությունները ոչ միայն սովորական բա-

ներ են, այլև որոշակի գիտաճյուղի վերաբերող տերմիններ և տերմինային անվանումներ: Այսպես, *ազգ բառակազմական հիմքով բաղադրված ազգաբան, ազգաբանական, ազգաբանություն, ազգագրագետ, ազգագրություն, ազգայնեզվաբանական, ազգայնեզվաբանություն, ազգախումբ* և այլն բառերը, որոնք իրենց համարժեքներն ունեն ֆրանսերենում, իբրև ընդհանուր գիտության եվրոպական անվանումների արտացոլում, հիմնականում նոր են, դրանց շատ քիչ մասը՝ մեկ-երկուսը կարելի է հանդիպել նախկինում մեզանում երևան եկած բառարաններում: Այնուհետև, *Նյարդ* սերող հիմքով բառերը, օրինակ, է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (Երևան, 1976) թեև 26-ն են, իսկ սույն բառարանում՝ 25-ը, սակայն վերջինիս մեջ, իբրև կազմախոսական-կենսաբանական տերմին կամ տերմինային անվանում, նոր են *Նյարդաբույժ, Նյարդագիտություն, Նյարդաբուժական, Նյարդակենսաբան, Նյարդակենսաբանություն, Նյարդահանգստաբար, Նյարդայնացնող, Նյարդայնացնում, Նյարդայնացում, Նյարդավիրաբուժություն, Նյարդավիրաբույժ, Նյարդացավ, Նյարդացավային, Նյարդոռոց* բառերը: Ինչպես նշված, այնպես էլ նման բազմաթիվ օրինակներ լավագույնս ցույց են տալիս, որ բառարանն ամփոփում է մեր ժամանակների գիտության գրեթե բոլոր ճյուղերին վերաբերող տերմինաբանությունը, որը լուրջ ձեռքբերում է ամեն մի բառարանի համար, տվյալ դեպքում՝ օգտակար սույն բառարանի թե տեսական և թե ուսումնական գործածության տեսակետից:

Գնահատելի է նաև այն, որ բառարանն ունի հայերենից ֆրանսերեն թարգմանվող մասի որոշակի բացատրական հագեցվածություն՝ կապված ոչ միայն հայերեն բառի լրացուցիչ պարզաբանման, այլև թարգմանվածի առանձին իմաստների մեկնաբանման հետ: Այսպես, *հարմարադրում* տեխնիկական տերմինը նախ՝ կից փակագծում լրացուցիչ կերպով բացատրվում է *չափաբերում, կարգաբերում* բառերով, այնուհետև՝ թարգմանվում, այսպես նաև *հարծակում* բառը թարգմանվում է ֆրանսերեն իմաստային չորս տարբերակով, որոնցից յուրաքանչյուրի դեպքում դարձյալ կից փակագծերում նշվում են կոնկրետ այն իմաստները, որոնք համապատասխանում են հայերենին:

Յուրաքանչյուր բառարանի գիտական բարձր արժեքի ցուցանիշ է այն, թե ինչքանով է այն ընդգրկում տվյալ լեզվի կամ լեզուների դարձվածաբանությունը, հոմանիշների, համանունների շարքերը, բառերի բազմիմաստությունը և այլն: Այս տեսակետից գրախոսվող բառարանը դառնում է խիստ արժեքավոր, որովհետև ներկայացնում է երկու լեզուների իմաստաբանական հարստության որոշակի մասը, մանավանդ զարգացման արդի ժամանակաշրջանին լիովին համապատասխան:

Վերջին մի քանի տասնամյակի ընթացքում հայերենի բառապաշարում առանձին բառային միավորի արժեքն են ստանում այսպես կոչված կրավորակերպ չեզոք սեռի բայերը (հմմտ. *Նվիրել ~ Նվիրվել* հակադրությունը, բայց առանձին՝ *Նվիրվել*), և դա նկատելի է նաև այլ լեզուներում, որպիսով երևույթն ստանում է ընդհանուր բնույթ, և որն իր հիմքում այլ բան չէ, քան լեզվական նորագույն իմաստային պատճենման հետևանք: Սույն բառարանում զգալի չափով տեղ է տրվում նման բայական միավորներին, և դա ոչ միայն այն դեպքում, որ այն համապատասխանում է ֆրանսերենին (հմմտ. *Նվիրվել՝ որևէ*

քանի տրվել ~ *s'adonner (a), se consacrer (a), se sacrifie (a)* և այլն, այլև պարզապես որպես այդպիսին (հմմտ. *նվիրված ~ devoue, fidele; consacrer; pleine* և այլն) բնորոշ է թե մեկ և թե մյուս լեզվին՝ վերջիններիս զարգացման ներկա փուլում:

Դժվար է ասել, թե որքանով է արդարացվում այն մոտեցումը, որ բառարանում որպես գլխաբառ տեղ են զտնում մաս բառերի թեք՝ հոլովված, խոնարհված և այլ կարգի ձևեր: Այսպես, քանի որ ֆրանսերենն ունի *le, la, a lui, a elle* տիպի միավորներ, ուստի բառարանում առանձին գլխաբառ է դրված *նացուցական—անձնական դերանվան հոլովված նրան ձևը*՝ իբրև թարգմանական համարժեք: Այնուհետև, բայական *չ(ը)* մասնիկով որոշ ձևեր՝ *չէ, չընդհատվող, չընդունել, չընդունում, չժանգոտվող, չսված չիաշված* և այլն, դրված են որպես առանձին գլխաբառ: Սա անշուշտ ունի իր բացատրությունը, որն ամենից առաջ բառային թարգմանությանն է վերաբերում, մանավանդ եթե նկատի ենք ունենում այն, որ բառարանն առաջին հերթին հետապնդում է ուսումնական նպատակ: Այս մասին հեղինակն ունի հետևյալ նշումը. «Բառարանը նախատեսված է ուսանողների, դասախոսների, թարգմանիչների, գիտաշխատողների և ֆրանսերենով հետաքրքրվող բոլոր անձանց համար, որոնք դեռ ստիպված են առավելապես օգտվել օտարալեզու աղբյուրներից» (տես էջ 5):

Մեծապես գնահատելի է այն, որ ծավալուն բառահոդվածները մշակված են ամենայն մանրամասնությամբ, բառարանագիտական լավագույն հատկանիշների ներմուծումով: Գլխաբառի մշակումը կտարվում է ոչ միայն քերականական բնորոշումներով, այլև հստակ ու հասկանալի բացատրություններով, հարակից բառային բնութագրումներով, բառի տարբեր իմաստների աստիճանական առանձնացումներով: Դրանց հաջորդում են դարձվածային կան ռեակցիան արտահայտությունները, եթե դրանք կարող են բաղադրված լինել տվյալ գլխաբառով առհասարակ: Հեղինակը մեզանում լեզուների հմուտ ուսումնասիրող է, ուստի բնական է, որ բառահոդվածների մշակումն ընթանում է առանց ավելորդությունների, առանց անհարթ ձևակերպումների: Եվ այս ամենը դրական կողմերով են բնորոշում սույն հայերեն—ֆրանսերեն բառարանը:

Ավելացնենք, որ պրոֆ. Ա. Բարլեզիզյանը մեր հանրապետության առաջատար այն գիտնականներից է, որոնց գիտական ուսումնասիրության ոլորտը տարիներ շարունակ եղել են հայ—ֆրանսիական գրական և լեզվական առնչությունները, առավելապես թարգմանության տեսության և պատմության հարցերը, և այդ ամենն իր լավագույն դրսևորումն ունի սույն բառարանի ստեղծման մեջ: Լինելով հայ—ֆրանսիական լեզվական առնչությունների բարձրաճաշակ մասնագետ, եթե ոչ այդ լեզուները կրող բարեկամ ժողովուրդների մշակույթի քաջատեղյակ, Վ. Բյուսովի անվան լեզվաբանական համալսարանի վաստակաշատ ուսուցիչը սույն բառարանով իր գիտական և քաղաքացիական ճանաչմանն ավելացնում է մի նոր երանգ՝ լինելով ոչ միայն բառարանագետ, այլև բառարանագիր:

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՇՈՒՄՅԱՆ